



Ոգի-Նաիրի
Vogi-Nairi

ERNEST HEMINGWAY
CENTURY DEMANDED
POETRY

Translation from English into Armenian
by Christine Kocharyan

Vogi-Nairi, Yerevan 2024

ԷՌՆԵՍ ՀԵՄԻՆԳՈՒԵՅ

ԴԱՐԸ
ՊԱՀԱՆՋՈՒՄ ԷՐ
բանաստեղծություններ

Թարգմանություններն անգլերենից՝
Քրիստինե ՔՈՉԱՐՅԱՆԻ

Երևան 2024

ՀՏԴ 821.111(73)-1 Հեմինգուեյ

ԳՄԴ 84(7ԱՄՆ)-5

Հ 500

«Գեղարմ» հանդեսի մատենաշար

Կազմող և խմբագիր՝ Հրանտ ԱԼԵԹՍԱՆՅԱՆ

Հեմինգուեյ Էռնեստ

Հ 500 **Դարը պահանջում էր:** Բանաստեղծություններ:

Է. Հեմինգուեյ /թարգմ. անգլերենից՝ Ք. Քոչարյանի/,

Երևան, «Ոգի-Նաիրի» հրատ., 2024.- 72 էջ:

Ամերիկացի դասական Էռնեստ Հեմինգուեյի արձակը ծանոթ է հայ ընթերցողական լայն շրջանակներին, իսկ ահա նրա պոեզիան շարունակում է անհայտ մնալ: Մինչդեռ նշանավոր արձակագիրը նաև բանաստեղծություններ է գրել, հատկապես երիտասարդ տարիքում՝ 1920-1923 թվականներին: Դրանք հիմնականում անմիջական անդրադարձներ են մարդկային այն ծանր ապրումների, որ նա ունեցել է առաջին համաշխարհային պատերազմի օրոք. գրողն այդ ժամանակ ծառայել է իտալական գործող բանակի հետեսակային զորագնդում:

Ընթերցողներին ենք ներկայացնում Հեմինգուեյի՝ պատերազմական եւ այլ թեմաներով բանաստեղծությունները, որոնք կազմում են գրողի պոետական ժառանգության կարևոր մասը: Բանաստեղծ Հեմինգուեյի հետ ծանոթությունը լրացուցիչ ազդակ կլինի հայ ընթերցողներին՝ մեկ անգամ եւս խորամուխ լինելու նրա մեծարժեք ստեղծագործությունների մեջ:

ISBN 978-9939-9145-8-9

ՀՏԴ 821.111(73)-1 Հեմինգուեյ

ԳՄԴ 84(7ԱՄՆ)-5

© Printed with permission of The Ernest Hemingway Foundation.

© «Ոգի-Նաիրի» (թարգմանության համար), 2024

**«ՀՐԱԺԵՆՏ ԶԵՆՔԻՆ»
շարքից**

ՈՏՔԵՐԻ ԴՈՓՅՈՒՆ

Դոփյուն, դոփյուն, դոփյուն ոտքերի,
Նա քայլեց, նա քայլեց շատ երկար,
Նա քայլեց, նա քայլեց նրանց հետ շարքով,
Սպանե՛լ, սպանե՛լ, սպանե՛լ անդադար,-
Ջոկատը գնաց սպանելու:

Սպանի՛ր, սպանի՛ր կամ մեռի՛ր, մեկ է,
Միևնույն է, թքած,
Անձրև ու ցեխ, անձրև ու ցեխ, դժվար է:
Ոտքեր, ոտքեր, ոտքեր,
Ջոկածկված ոտքեր:

Թո՛ղ նվնվոցը, թո՛ղ նվնվոցը – մի՛ խղձա,
Միասին ենք գնում, գնում ենք մեռնելու,
Բայց քայլելն արդեն անհնար է,
Ահա մի ուս, ահա մի ուս, ահա մի ուս,
Ահա մի ուս՝ դե սու՛ս:

Կողքկողքի, կողքկողքի, ոտքերի դոփյուն,
Նա անուժ էր այլես առաջ քայլելու:
Ահա և վերջ, ահա և վերջ, կյանք, կներես,
Դժվար է, դժվար է քեզ տանել առաջ:
Դոփյուն, դոփյուն, դոփյուն ոտքերի...

Նա քայլեց, նա քայլեց շատ երկար,
Նա քայլեց, նա քայլեց նրանց հետ շարքով,
Սպանե՛լ, սպանե՛լ, սպանե՛լ անդադար,-
Ջոկատը գնաց սպանելու:

ՄԵՆՔ ՍԵՐ ԵՆՔ ՏԱՆՈՒՄ ՄԵՐ ՄԵՋ

Մենք սեր ենք տանում մեր մեջ,
Մազլցում ենք բարձունքն ի վեր -
Ավելի ու ավելի բարձր:
Այնքան դժվար է շարժվելը,
Այնքան ծանր է քեզ տանելն, իմ սեր,
Ոտքերս չեն լսում, ոտքերս կառչո՞ւն են:

Ոտքի՛, ոտքի՛,
Թիրախին մոտ...
Ոտքի՛, ոտքի՛,
Աստծուն մոտ...
Ոտքերս կաչում են մազնիսի պես,
Ջոհվելն ահավոր է, օգնե՛ք, օգնե՛ք...
Ոտքի՛, ոտքի՛,
Թիրախին մոտ...
Ոտքի՛, ոտքի՛,
Աստծուն մոտ...
Ոտքերս կաչում են մազնիսի պես,
Ջոհվելն ահավոր է, օգնե՛ք, օգնե՛ք...

Ոտքերս նվում են, ոտքերս աղաչում են,
Մուրձի պես խփում են քարացող գետնին:
Ամբողջն ունայն է, վերջ տուր նվնվալուդ:
Ուռն, բարձունքն է: Կմեռնե՛ս այստեղ...

Ոտքի՛, ոտքի՛,
Թիրախին մոտ...
Ոտքի՛, ոտքի՛,
Աստծուն մոտ...
Ոտքերս կաշում են մազնիսի պես,
Ջոհվելն ահավոր է, օգնե՛ք, օգնե՛ք...
Ոտքի՛, ոտքի՛,
Թիրախին մոտ...
Ոտքի՛, ոտքի՛,
Աստծուն մոտ...
Ոտքերս կաշում են մազնիսի պես,
Ջոհվելն ահավոր է, օգնե՛ք, օգնե՛ք...

Այնքան դժվար է քեզ տանելն, իմ սեր:
Այնքան դժվար է քեզ տանելն, իմ սեր...

ՍԵՐ ԵՎ ԿԱՐԵԿՅԱՆՔ

Հանգիստ, հանգիստ
Հիմա այս պահին
Սեր
Սեր և կարեկցանք
Միայն սեր
Միայն սեր
Սեր և կարեկցանք միայն

Երբ նրանք
Հեռանում են մի երկիր,
Ուրկից չեն դառնում ետ:
Փակվում է նրանց ներքին աչքը
Եվ գիտակցումն այդ աճում է թարմ ու
տարաշխարհիկ

Բայց վարդի պես ինչ-որ:
Եվ այն փթթում է
Սիրո մեջ,
Սիրո և կարեկցանքի մեջ
Միայն սիրո մեջ
Միայն սիրո մեջ
Միայն սիրո և կարեկցանքի մեջ

ԴԵՊԻ ՔԵՋ ԵՄ ՆԵՏՎՈՒՄ

Դեպի քեզ եմ նետվում
Եվ թվում է աչքիս՝
Դու՛ ես ինձ ընդատաջ
Նետվում անվարան:

Դեպի քեզ եմ նետվում,
Բայց արգելք կա մեր դեմ,
Մենք չենք տեսնում իրար –
Մեր միջեւ կա խանդակ:

Պատերազմն է անգուրթ
Մեզ բաժանել հատու:
Մոլեգնում է դարձյալ
Պատերազմը անհագ,

Նա բացում է հսկա
Երախն իր մարդակեր,
Ահա Բալթազարի
Խրախձանքն է եռում...

Դեպի քեզ եմ նետվում
Եվ թվում է աչքիս՝
Դու՛ ես ինձ ընդատաջ
Նետվում անվարան:

Դեպի քեզ եմ նետվում,
Դեպի քեզ եմ նետվում,
Նետվում, նետվում, նետվում,
Ես նետվում եմ առ քեզ:

ՀԱՎԵՐԺ ԿԵՆԴԱՆԻ

Այս գիշեր մեռյալները քնել են սառը հողի մեջ:
Զյունը խցանվում է ծառաբների միջև
Եվ կուտակներ գոյացնում
Կոտրած ձյուղերով՝ տապանաքարերի տեղ:

Նրանք զգում են, թե ոնց է հողը կենդանանում,
Քանզի մեռյալները հողի մասն են դարձել,
Քանզի մեռյալները հողի մասն են դարձել,
Ամենքը, ովքեր արժանիորեն իջան հողի մեջ:

Հավերժ կենդանի
Հավերժ կենդանի
Հավերժ կենդանի
Հողի հետ մեկտեղ:

Իսկ գարնանը անձրև կտեղա, և հողը կտաքանա,
Սև ծառերը կգուգվեն մատղաշ տերևներով,
Փոքրիկ հողակույտերը կծածկվեն խոտով,
Եվ մեռյալները կզգան, թե ոնց է հողը կենդանանում:

Նրանք զգում են, թե ոնց է երկիրը կենդանանում,
Քանզի մեռյալները դարձել են երկրի մի մասնիկը,
Քանզի մեռյալները դարձել են երկրի մի մասնիկը,
Ամենքը, ովքեր արժանիորեն մտան հողի մեջ:

Էռնեստ ՀԵՄԻՆԳՈՒԵՅ, ԳԱՐԸ ՊԱՀԱՆՔՈՒՄ ԷՐ

Հավերժ կենդանի
Հավերժ կենդանի
Հավերժ կենդանի
Երկրի հետ մեկտեղ:

ԻՆՉՈՒ՞

Իմ վաշտի հետ ջահել,
Խրամատով ոլոր,
Պատերազմի ահեղ
Կրակի մեջ ընկա:

Ինչու՞...
Ինչու՞, ինչու՞, ինչու՞...
Ինչի՞ համար, ինչու՞...
Ինչի՞ համար և ու՞մ...
Ու՞մ համար, ու՞մ...
Ու՞մ, ու՞մ, ու՞մ...

Զոհվում ու մեռնում եմ
Մարդիկ քայլերթին,
Մարտերից բզկտված
Գետնին քայլելիս...

Ինչու՞...
Ինչու՞, ինչու՞, ինչու՞...
Ինչի՞ համար, ինչու՞...
Ինչի՞ համար և ու՞մ...
Ու՞մ համար, ու՞մ...
Ու՞մ, ու՞մ, ու՞մ...

ՍՊԱՆՎԱԾԸ

Ինչ-որ մեկը բղավեց, ինչ-որ մեկը գոռաց,
Ինչ-որ մեկն անդադար բղավում էր:
Դա ինչ-որ աներևակայելի ձիչ էր,
Ճոխնչ ու վնգվնգոց:
Նա անշարժ պառկած էր՝ դեմքը ավազի մեջ թաղած,
Գլուխը ձեռքերով ծածկել էր:
Տաք էր և տակը կաշուն արյուն կար:
Նա զգացել էր, թե ոնց է սվինի շեղբը
Անցել մարմնի միջով ու խրվել ավազում:
Հետո ամեն ինչ չքացավ:
Ինչ-որ մարդիկ վերցրին նրան՝ վազելով տարան,
Եվ ձիչը բարձրացավ արագ:
Նա զգաց խորություն՝ ինչպես է իր շուրջ
Ամեն ինչ մեծանում:
Իսկ հետո ավելի ու ավելի փոքրանում էր,
Եվ հետո ավելի ու ավելի մեծանում էր նորից:
Հետո աչքի առաջ ամեն ինչ վազեց,
ավելի ու ավելի արագ,
Եվ ավելի արագ, և ավելի արագ, և ավելի արագ,-
Դա նման էր ֆիլմի, երբ արագացնում են կադրերը:

ԻՆՉՈ՞Վ Է ԳԻՇԵՐԸ ՏԱՐԲԵՐՎՈՒՄ ՑԵՐԵԿԻՑ

Ինչո՞վ է գիշերը տարբերվում ցերեկից:
Բացառությամբ նրա, որ դու գիշերը
Դարձյալ մնում ես մեն ու միայնակ,
Նույնիսկ եթե դու կնոջ կողքին ես:

Ոչնչով, ոչնչով, ոչնչով,
Եթե չհաշվենք, որ ամեն գիշեր
Վախն անխուսափելիորեն սողոսկում է քո մեջ:
Թեկուզ և ցերեկը համարձակ համարվես,
Թեկուզ և ցերեկը համարձակ համարվես:

Ոչնչով, ոչնչով, ոչնչով,
Այն բացառությամբ, որ ցերեկ օրը
Չես բացատրի գիշերվա դեպքը:
Քանի որ մարդիկ, երբ այս աշխարհ են
Բերում այնքան ջանք ու արիություն,
Աշխարհը պետք է սպանի նրանց կամ էլ ջնջի,
Կամ էլ ջնջի:

Ինչո՞վ է գիշերը տարբերվում ցերեկից:
Ինչո՞վ է գիշերը տարբերվում ցերեկից:
Ոչնչով, ոչնչով, ոչնչով,
Ոչնչով, ոչնչով, ոչնչով:

ԹԱՅ ՀՈՂԻ ՎՐԱ

Անձրևը թափվում է թաց հողի վրա,
Առվակներ են հոսում քարափներով,
Ողողում սև ու հսկա կոճղեր,
Սև ծառաբների վրա են ձողփում:
Ճամփան վերածվում է աղտեղ ցեխաջրի:

Ահա՛ ձանապարհին պատկած մի վիրավոր,
Փորձել են նրան հենել ծառին,
Բայց նա ընկել է ջրափոսը և այդպես պատկել,
Այլևս նրան չբարձրացրին:

Հետո ձանապարհին երկուսն էին ընկած,
Երկու ջահել սպանված, հնարավոր է՝ ծանր վիրավոր:
Մարտն ավարտված է: Ո՞վ գիտի, ո՞վ գիտի -
Իսկ գուցե սանիտարները ի վերջո կգան...
Իսկ գուցե սանիտարները ի վերջո կգան...
Իսկ գուցե սանիտարները ի վերջո կգան...

Champs d'honneur¹

Զինվորին լավ մահ չի վիճակված.
Ռազմադաշտի մոտ նրան խաչն է սպասում:
Փայտե մի խաչ լուկ՝ հողի մեջ խրված՝
Ընկած մարտիկի գլխավերելում:

Զինվորը հազում է ծխի մեջ, կծկվում.
Իսկ շուրջը՝ պայթյուն, կրակ ու ոռնոց,
Քանի դեռ գրոհը չի ավարտվել, նա
Զի հավատում, որ ողջ է մնացել:

Զիկագո, 1920

1. *Champs d'honneur/Ֆր./ - մարտադաշտ*

ԱՐՄԻԵՐՈՂ¹, ԱՋԻԱԳՈՂ²

Արսիերո, Ազիագո...
Եվս մի հիսուն
Փոքրիկ սահմանամերձ գյուղեր,
Որ կանգուն էին մինչև պատերազմը.
Մոնտե Գրասպա, Մոնտե Կորնո,
Եվ անուններ տասնյակներով՝
Խաղաղ հոսքում ժամանակի,
Որ այդպես էլ մեզ չհասան:

Փարիզ, 1922

1. Արսիերո (իտալ. *Arsiero*) – կոմունա Իտալիայում, գտնվում է Վենետո մարզում՝ Վիչենցա գավառում

2. Ազիագո (իտալ. *Asiago*) – քաղաք Իտալիայի Վենետո մարզում՝ Վիչենցա գավառում

* * *

Բոլոր բանակները միանման են
Բայց փառքը բոլորին չի տրվում
Հատիքիցների թնդյունը լսում են ամենքը
Իսկ քաջությունը բախտն է տղերքի
Հին մարտիկները տանջված հայացք ունեն
Նույն հին ստերը ձանձրույթվ լսում են զինվորները,
Ընկածների վրա ձանձերն են նստում

Փարիզ, 1922

ԿԱԹՎԱԾԱՀԱՐ ԶՈՐՔԸ

Տղամարդիկ ուրախությամբ գնում էին մահվան,
Բայց նրանք այն քաջ տղամարդիկ չէին,
Ովքեր տարիներ ի վեր
Պահում էին
Սահմանը:
Սրանք մի քանի անգամ գնացին ու
Ապա հեռացվեցին՝
Ժառանգություն թողնելով անպարկեշտ երգեր:

Փարիզ, 1922

Reparto d'assalto¹

Բեռնատարի հատակին, մղոնից մղոն,
Սապոգների կրունկները զարկվում էին
գուժկան թմբուկի պես:

Մերժանտները գուսպ էին,

Կապրալները՝ տրտում:

Լեյտենանտների մտքին Մեստրեի² հրապուրիչ
մարմնավաճառներն էին,

Քնկոտ, փափուկ ու տաք մարմնավաճառները,

Նրանք, որոնց հետ կարելի է մոռանալ հարսնացուին:

Ոլորապտույտ, երկար ու քարուքանդ ձամփով

Բեռնատարը սողում էր դեպի Գրապպա³:

1. *Reparto d'assalto* (իտալ.) - գրոհային ջոկատ

2. Վենետիկի մայրցամաքային մասը

3. Գրապպա – լեռ Իտալիայում, որի ստորոտին գտնվում է Բասսանո-դել-Գրապպա քաղաքը: Այն հռչակված է որպես հանրահայտ ալկոհոլային «գրապպա» խմիչքի հայրենիք: Այդ շրջանը եղել է իտալական դիմադրության կենտրոններից մեկը, 1917-1918թթ.՝ ավստրիական ներխուժման ժամանակ: Այնտեղ գտնվում է զինվորական մեծ գերեզմանոցը, որտեղ ամփոփված են 25 հազար զինվորներ, ինչպես՝ իտալացիներ, այնպես էլ՝ ավստրիացիներ:

Արդիթները⁴ ցրտից նատոցներին անգուսպ դողում էին,
Բոլորը՝ չսափրված, գնում էին խոժոռ,
Իսկ հետեւակը քայլքով պատրաստվում էր մարտի:
Անպամած էր, ցուրտ, գալարվում էր ձամփան
թունոտ օձի պես:
Ելնելով արձձահար սոձիներով ծածկված
ստորոտից վեր,-
Բոլոր արդիտները զոհվեցին Ասալոների⁵
լերկ լանջերին:

Փարիզ, 1922

4. *Arditi* (իտալ.) - քաջեր, այդպես էին կոչվում գրոհային ջոկատների զինվորները իտալական բանակում, 1915-1918թթ.:

5. *Ասալոներ* – Մոնտե-Գրասպայայից ոչ հեռու գտնվող լեռ, որի մերձակայքում կատաղի մարտեր էին տեղի ունեցել 1917-1918թթ.:

* * *

Օրվա խինդն անցավ,
Լույսը ինձ քեց:
Խավար է միայն...
Մութը քունքերդ է ձնշում՝
Պինդ սեղմելով մամլիչի պես,
Երակներում՝ եռուն արյուն,-
Գրավելով միտքս խաղուն՝
Գիշերն է խուլ աղաղակում:
Միայն աղոտ լույս մաղելով
Եվ մշուշով հեշտ պարուրված՝
Լուսինն է լոկ նստել ինձ հետ,
Նայում է նա լուռ ու հանգիստ
Մի անտեղյակ բանքերի պես:
Իսկ սարսափը սիրտ է մաշում,
Ծվատելով հոգիս տանջված.
Ծվատում է, ձչում երկար,
Բայց շուրջբոլոր լուռ է ու պաղ...
Քամին է լոկ հանգիստ ուզում
Եվ վարագույրները ձոձում
Իմ անկողնուց մի քիչ վերեւ:
Իսկ մտքերս պտտվում են լոկ նրա շուրջ...
- Օ՛ եղծելի մահը ունայն
Մի մոռացված ժամի կգա

Սառցե շնչով անկասելի,
Կգա հապճեպ ինձ վերցնելու,
Որ մարմինս պղծի իսպառ...
Արդ, զեռունն է սողում հիմա,
Մահն է թաքնված խավարի մեջ՝
Իմ նեխահոտ անկողնու տակ:

ՍՊԱՆՎԱԾ ՊԱՅԻՎԸ – Հուլիսի 8, 1918¹

Ցանկությունը և
Քաղցր բաբախող ցավերն
Ու քնքուշ վիրավորանքները
Որ դու էիր,
Անցան-գնացին խավարի գիրկը:
Այժմ գիշերը, երբ խոժոռ դեմքով
Գալիս ես ինձ հետ դու պառկելու,
Թվում է՝ սառը ու կոշտ մի սվին
Խրվում է ջերմորեն տրոփող հոգուս մեջ:

1. 1918-ի հուլիսի 8-ին Հեմինգուեյը ծանր վիրավորվում է իտալական ձակաառում, Պալիվ գետի մոտ:

ԴԱՐԸ ՊԱՀԱՆՋՈՒՄ ԷՐ

Դարը պահանջում էր, որ մենք բարձր երգենք,
Բայց նա իրականում կտրեց մեր լեզուն:
Դարը պահանջում էր, որ մենք առաջ գնանք,
Բայց աղյուսե պատով փակ էր անցուղին:
Դարը պահանջում էր, որ մենք ազատ պարենք,
Բայց մեզ երկաթե տաբատ հագցրեց:
Ի վերջո մեր դարն ընկավ նրանից,
Հանուն որի նա համառ պայքարում էր:

Փարիզ, 1922

ԳԵՐԻՆԵՐԸ

Ոմանք հայտնվեցին շղթաներով՝
Զգոջալով, բայց հոգնած:
Այնքան հոգնած, որ քարշ էին գալիս:
Զկար այլևս մտածել ու ատել,
Զկար այլևս մտածել ու կովել,
Զկար այլևս ոչ նահանջ, ոչ հույս:
Բուժում է այսպիսի երկար արշավը՝
Նա հեշտացնում է մահը:

ՄԱՀԱՅԱԾ ԼԱՎ ՏՂԱՆԵՐԻՆ

Նրանք մեզ կուլ են տալիս՝
Թագավորն ու երկիրը,
Ամենակարող Քրիստոսն
Ու մնացածը:
Հայրենասիրությունը,
Ժողովրդավարությունը,
Պատվո
Բառերն ու արտահայտությունները՝
Կան հայիտյուն են, կան սպանում են մեզ:

ԱՅԼ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԵՆՔ ՎԱՏՆՈՒՄ ԵՆՔ ԱՅՆ,
ԻՆՉԸ ՍՏԵՂԾՎԱԾ ՉԷ ՎԱՏՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Իմ միակ սեր.

Մենք վատնում ենք, վատնում ենք, վատնում ենք

Այն, ինչը ստեղծված չէ վատնելու համար:

Մենք ավիրում ենք, ավիրում ենք, ավիրում ենք

Այն, ինչն անիմաստ է ոչնչացնել:

Մեր սիրտը լարված է՝

Հրացանի պես նշանառված...

Շուտով տասներկուսն է՝

Գողերի ժամանակը,

Եվ դու կվազես

Դեպի խառնակ անցյալ:

Անսպասելիորեն, հանգիստ, մեղմաձայն

Պարզապես կհարցնես՝

Կարելի՞ է... Ես եմ:

ՏԱՐԻՔԻ ՊԱՀԱՆՁՈՎ

Տարիքը պահանջել է, որ մենք երգենք
Ու կարձ պահենք մեր լեզուները:

Տարիքը պահանջել է, որ մենք հոսենք
Ու նա խցանի մեզ ինչ-որ շշում:

Տարիքը պահանջել է, որ մենք պարենք
Ու նա խցկի մեզ կոշտ տաքատի մեջ:

Ի վերջո, տարիքը ստացավ այն բոլոր
Հիմարությունները, որ պահանջել էր:

ՎԵՐՆԱԳԻՐ

Քանզի մենք մեծամեծ մտքեր ենք ունեցել,
Բայց՝ գնացել կարճ ճանապարհով:
Եվ պարել ենք սատանայի դուդուկի տակ,
Բայց դողալով աղոթել ենք տանը.
Ծառայելով մի տիրոջ գիշերը,
Մյուսին՝ ցերեկը:

Ի ՎԵՐՋՈՒ

Նա փորձեց դուրս թքել ձմարտությունը,
Սկզբում՝ չորաբերան,
Բայց այն ցամաքեց և ի վերջո լռեց,
Իսկ ձմարտությունը ծորում էր նրա կզակից:

ԽԵՆԹ ՔՐԻՍՏՈՆՅԱՅԻՆ

Մի կատու կար՝ անունը Խենթ Քրիստոնյա,
Ով այնքան չապրեց, որ խենթանա.
Միասեռական էր, երիտասարդ, սիրուն,
Կյանքի գաղտնիքներին ծանոթ էր նա:
Նախաձաշին հասնում էր ձիշտ ժամանակին,
Ոտքերդ էր ընկնում և գնդակ որսում,
Նա պոլո-պոնիից արագ էր վազում,
Եվ ընդհանրապես չէր անհանգստանում,
Պոչը մի փետուր էր, որ քարշ էր տալիս իր ետևից,
Նա գիշերվա պես սև էր, լույսի պես՝ արագ:
Սակայն աշնանը չար կատուները սպանեցին նրան:

ՊՈՆԶԻԱ

Ոստի, հիմա,
Անցած գիշեր կորցրած եռյակին
Վերադարձրի այսօր կրկին
Թաց ու մութ անտառ...

ԻՍՊԱՆԻԱՅԻ ՈԳԻՆ

Անձրևի տակ, անձրևի տակ, անձրևի տակ,
անձրևի տակ Իսպանիայում:
Իսպանիայում անձրևն է գալիս:
Այո, սիրելիս, և դեռ ավելին, ցլամարտեր էլ
չեն լինում:
Պարուհիները երկար ու սպիտակ տաբատով են
պարում:
ձիշտ չէ՝ զբաղվել սիրով մորաքույրներիդ հետ.
Արի, Ընկեր, արի տուն գնանք:
Տունն այնտեղ է, որտեղ սիրտդ է,
Տունն այնտեղ է, որտեղ կարողանում ես
գազեր արձակել:
Արի, արի գնանք տուն՝ գազեր արձակենք:
Գազեր արձակելու մեջ արվեստ չկա:
Բայց նաև այնպես չէ, որ այն անարվեստ է:
Արի տուն գնանք՝ անարվեստ գազեր արձակելու:
Ժողովրդավարություն:
Ժողովրդավարություն:
Բիլն ասում է՝ ժողովրդավարությունը
պետք է հեռանա:
Հեռացիր, ժողովրդավարություն:
Հեռացիր
Հեռացիր
Հեռացիր

Բիլի հայրը երբեք գիտակցաբար
Սեղան չէր նստի դեմոկրատի հետ:
Այժմ Բիլն ասում է՝ ժողովրդավարությունը
պետք է հեռանա:
Վերջ տվեք ժողովրդավարությանը:
Ժողովրդավարությունը կեղտ է:
Հարաբերականությունը կեղտ է:

Բռնապետները կեղտ են:
Մենկենը¹ կեղտ է:
Վալդո Ֆրենկը² կեղտ է:
Բրունը կեղտ է:
Դադան³ կեղտ է:
Դեմփսին⁴ կեղտ է:
Սա դեռ ամբողջական ցանկը չէ:
Ասում են՝ Էզրան⁵ կեղտ է:
Բայց Էզրան լավն է:
Եկեք Էզրայի համար հուշարձան կառուցենք:

1. Այլան Իրվին Մենկեն – ամերիկացի կոմպոզիտոր, երգահան, երաժշտական դիրիժոր,

2. Վալդո Դեյվիդ Ֆրենկ – ամերիկացի գրող և լրագրող, հրապարակախոս

3. Դադա կամ դադաիզմ – 20-րդ դարասկզբի ավանգարդ արվեստի ուղղություն, որ դրսևորվեց գրականության, նկարչության, թատրոնի, կինոյի և քանդակագործության մեջ

4. Ջեք Դեմփսի (Ուիլյամ Հարիսոն Դեմփսի) – ամերիկացի բոնգրամարտիկ, ծանրքաշային կարգում աշխարհի չեմպիոն

5. Էզրա Փաունդ – ամերիկացի բանաստեղծ

Լավ ու գեղեցիկ մի հուշարձան:

Կա գեղեցիկ մեկը, բայց

Կարո՞ղ եք մեկն էլ կառուցել:

Սպասեք, ես էլ կփորձեմ կառուցել:

Եկեք բոլորս փորձենք կառուցել:

Թող անկյունում գտնվող փոքրիկ աղջիկն էլ
փորձի կառուցել:

Փորձի՛ր, փոքրիկ աղջիկ:

Արա դա Էզրայի համար:

Լավ:

Դուք բոլորդ հաջողակ երեխաներ եք:

Հիմա եկեք մաքրենք խառնաշփոթությունը:

“The Dial” ամսագիրը հուշարձան է կառուցում
Պրուստի⁶ համար:

Էզրայի համար մենք կառուցել ենք:

Հուշարձանը հուշարձան է:

Ի վերջո, ամեն ինչի ոգին է միայն կարևոր:

6. Մարսել Պրուստ – ֆրանսիացի նշանավոր վիպասան, ակնարկագիր և քննադատ, մոդեռնիզմի ներկայացուցիչ

ԻՆՁ ԴՈՒՐ ԵՆ ԳԱԼԻՍ ԱՄԵՐԻԿԱՅԻՆԵՐԸ
Օտարերկրացու անունից

Ինձ դուր են գալիս ամերիկացիները:
Նրանք նման չեն կանադացիներին:
Իրենց ոստիկաններին լուրջ չեն ընդունում:
Մոնրեալ¹ են գալիս խմելու համար:
Եվ ոչ՝ քննադատելու:
Նրանք պնդում են որ հաղթել են պատերազմում:
Բայց հոգու խորքում գիտեն որ չեն հաղթել:
Նրանք մեծ հարգանք ունեն անգլիացիների հանդեպ:
Նրանք սիրում են ապրել արտասահմանում:
Ջեն պարծենում, թե ինչպես են լողում:
Բայց նրանք դա լավ են անում:
Նրանք պինդ, ձերմակ ատամներ ունեն:
Եվ ամբողջ տարին կրում են BVD²-ի ներքնազգեստ:
Երանի սրանով նրանք չպարծենային:
Նրանք ունեն աշխարհի երկրորդ լավագույն
նավատորմը:

1.Մոնրեալ – ամենախոշոր քաղաքը Քվեբեկ նահանգում և մեծությամբ երկրորդ քաղաքը Կանադայում:

2.BVD – տղամարդու ներքնազգեստի ապրանքանիշ. բրենդը հիմնադրվել է 1876 թվականին և անվանվել Նյու Յորքի ֆիրմայի երեք հիմնադիրների՝ (Ջոզեֆ Վ.) Բրեդլիի, (Լյութեր Բ.) Վուրհիսի և (Լայման Հ.) Դելի անուններով:

Բայց երբեք չեն խոսում այդ մասին:

Նրանք կցանկանային՝ Հենրի Ֆորդը³

լիներ նախագահ:

Բայց նրան երբեք չեն ընտրի:

Նրան տեսան Բիլ Բրայանի⁴ միջոցով:

Նրանք հոգնել են Բիլլի Սանդեյից⁵:

Նրանց տղամարդիկ զվարձալի սանրվածք ունեն:

Նրանց Եվրոպան դժվար է կլանում:

Եթե նույնիսկ եղել են այնտեղ:

Նրանք են հրատարակել Բարնի Գուգլ, Մաթ

և Ջեֆ կոմիքսները:

Ու նաև Ջիգսը:

Նրանք կին մարդասպաններին կախաղան

չեն բարձրացնում:

Նրանց ներգրավում են վոդևիլի մեջ:

Նրանք կարդում են կիրակնօրյա երեկոյան թերթեր:

Եվ հավատում են Ձմեռ պապիկին:

Երբ վոդ են վաստակում,

Շատ են վաստակում:

Նրանք հրաշալի մարդիկ են:

3. Հենրի Ֆորդ – ամերիկացի արդյունաբերական և բիզնես մագնատ

4. Բիլ Բրայան – օրգանական տեխնոլոգիաների վարպետ

5. Բիլլի Սանդեյ – ԱՄՆ բեյսբոլի ազգային լիգայում հայտնի խաղացող, համարվում էր նաև ամենաազդեցիկ ամերիկացի ավետարանիչը 20-րդ դարի առաջին երկու տասնամյակներում:

ԻՆՁ ԴՈՒՐ ԵՆ ԳԱԼԻՍ ԿԱՆԱԴԱՅԻՆԵՐԸ
Օտարերկրացու անունից

Ինձ դուր են գալիս կանադացիները:
Նրանք նման չեն ամերիկացիներին:
Նրանք տուն են գնում գիշերները:
Նրանց ծխախոտից վատ հոտ չի գալիս:
Նրանց սագում են գլխարկները:
Նրանք հավատում են, որ հաղթել են պատերազմում:
Նրանք չեն հավատում գրականությանը:
Նրանք կարծում են՝ Արվեստը չափազանցված է:
Բայց նրանք հրաշալի դիտվում են չմուշկների վրա:
Նրանցից ոմանք էլ շատ հարուստ են:
Իսկ երբ հարստանում են, ավելի շատ ձի են գնում,
քան մեքենա:
Զիկագոն Տորոնտոն համարում է
պուրիտանական քաղաք:
Սակայն ն բռնցքամարտը, ն ձիարշավը
անօրինական են Զիկագոյում:
Կիրակի օրը ոչ ոք չի աշխատում,
Ոչ ոք բացարձակապես:
Դա ինձ չի գայրացնում:
Կա միայն մեկ *Վուդբայն*¹:

1. Woodbine – շրջան Կանադայի Կալգարի քաղաքում

Իսկ դու երբևէ եղել ես *Բլու-Բոնետտում*²:
Եթե Օնտարիոյում մարդ է ընկել մեքենայիդ տակ,
Հնարավոր է՝ բանտ նստես:
Բայց դա չի արվում:
Ավտովթարից զոհվել է ավելի քան 500 մարդ
Չիկագոյում,
Այս տարի միայն:
Դժվար է հարստանալ Կանադայում:
Բայց փող աշխատելը հեշտ է:
Ջափազանց շատ թեյատներ կան:
Իսկ, այ, կաբարեներ՝ չկան:
Երբ մատուցողին թեյավճար ես տալիս,
Ասում է՝ շնորհակալություն,
Հսկիչին կանչելու փոխարեն:
Նրանք կանանց տեղը չեն զիջում տրամվայում:
Նույնիսկ եթե նրանք գեղեցիկ տեսք ունեն:
Նրանք բոլորը շտապում են տուն՝ հասնել ընթրիքին
Ու ռադիոընդունիչներին:
Նրանք լավ ժողովուրդ են:
Ես հավանում եմ նրանց:

2. *Blue Bonnets* – պուրակ, որտեղ աճում են Տեխասի խորհրդանշանի՝ լուսին ցեղատեսակին պատկանող կապույտ ծաղիկներ:

ՌՈՒԶՎԵԼՏ

Աշխատավորները վստահ էին, որ
Նա մարեց բոլոր հույսերը և ստիպեց
Դնել իր նկարը նրանց պատուհաններին:

- Իսկ ի՞նչ կաներ նա Ֆրանսիայում,-
Հարցրին նրանք:

Թերևս մի բան միայն՝

Մահանալ,

Թերևս,

Զնայած գեներալները հազվադեպ են
անկողնում մեռնում,

Բայց նա արեց դա:

Եվ բոլոր լեգեոները, որ նա հյուսել էր իր շուրջ,

Շարունակում են ապրել ու փրթել,

Այժմ՝ առանց նրա գոյության խոչընդոտի:

Գ'ԱՆՈՒՆՑԻՈՒՄ¹

Կես միլիոն մահացած մարդ, գրոհը տանի,
Եվ նա հաճույք էր ստանում դրանից,
Այդ բոզի տղան:

1. Գաբրիելե Գ'Աննունցիո – իտալացի գրող, բանաստեղծ, դրամատուրգ, ռազմական և քաղաքական գործիչ

ՆԵՈՒՌՈՄԻՋՄԱԿԱՆ¹ ՊՈԵՄ

Տերն իմ հովիվն է, ես այլևս չեմ
ցանկանա նրան:

1. Նեոթոմիզմ – կաթոլիկության պաշտոնական փիլիսոփայությանը

ԵՍ ԽԵՆԹԱՆՈՒՄ ԵՄ
ՎԱՅՐԻ ԿԱՆԱՆՑԻՑ

Ես խենթանում եմ վայրի կանանցից
Կոնյակ
Մեղանչանք
Որովհետև սիհիհիհիհիբում եմ նրանց:

ՄՈՆՊԱՌՆԱՍ¹

Եռամսյակում՝ ոչ մի ինքնասպանություն
Ծանոթ մարդկանց մեջ,
Ոչ մի հաջող ինքնասպանություն:
Մի չինացի տղա է ինքնասպան եղել.
(նրա նամակները դեռ պահում են
Մոնպառնասի աշտարակում²):
Մի նորվեգացի տղա է ինքնասպան եղել.
(ոչ ոք չգիտի, թե ուր է գնացել մյուս նորվեգացին):
Նրանք մարդու նմուշ են գտել՝ միայնակ
Ընկած անկողնում՝ վաղուց մահացած
(սա դժվար կացության մեջ դրեց դոնապանին):
Բուրավետ յուղ, ձվի սպիտակուց, մանանեխ և ջուր,
օձառաջուր,
և ստամոքսի պոմպերը փրկում են ծանոթ մարդկանց:
Ամեն օր սրձարանում կարելի է ծանոթ մարդ գտնել:

*1.Մոնպառնաս - շրջան Փարիզի հարավում, Սենա գետի ձախ
ափին: Մոնպառնաս թաղամասը հայտնի դարձավ 20-րդ դարի
սկզբին, երբ տեղի լեզենդար սրձարաններում սկսեց հավաքվել
ստեղծագործ մտավորականությունը: Այստեղ էին գալիս գրողներ,
ձարտարապետներ, նկարիչներ, երաժիշտներ աշխարհի տարբեր
ծայրերից, որ վարձեն էժան սենյակներ:*

*2.Մոնպառնասի աշտարակ - երկնաքեր, որ գտնվում է
Ֆրանսիայի մայրաքաղաք Փարիզի 15-րդ շրջանում: Ունի 57 հարկ,
բարձրությունը՝ 210 մետր:*

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ

Միակ տղամարդն ում սիրել եմ
Հրաժեշտ տվեց
Ու հեռացավ
Նա սպանվեց Պիկարդիայում¹
Արևոտ մի օր:

1. Պիկարդիա - երկրամաս Ֆրանսիայի հյուսիսում:

ԳՆԴԱՅԻՐ

Աստծո աղացները դանդաղ են աղում,
Բայց այս աղացը
Զխկչխկում է մեքենայական այլ ռիթմի մեջ:-
Տգեղ մտքերի փոքրիկ հետևակը
Շարժվում է բարդ ու անծանոթ տեղանքով՝
Միակ գնդացրի պաշտպանության ներքո,-
Ահա այդպիսի դյուրակիր «Crown»¹:

1. Crown - գրամեքենա

* * *

Միտքը՝ բորբոքուն, սառցափոշին է կպած դեմքին,-
Աղջիկը փողոցում սիրալիր դիմում է.

«Քեռի, թանկագինս, թույլ տուր տաքանալ,

Սառնամանիք է, հագուստ չունեմ տաք»:-

Դռները փակվեցին, և լսվեց՝ «տականք»:

Ցուրտ փետրվարն է հեծկլտում կամաց:

Միտքը՝ բորբոքուն, սառցափոշին է դեմքին կպած,

Աղջիկը փողոցում սիրալիր դիմում է.

«Աստված իմ բարի, դո՛ւ ինձ ընդունիր,

Ջերմություն չկա ինձ համար երկրում»:

Փողոցում ձյան բուք է ու բորան,

Աղջիկը հեզիկ հենվեց կոշտ պատին,

Միտքը խաղաղվեց, դեմքը՝ անխռով,-

Աստված, իհարկե, ընդունեց նրան:

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Մացառախոզի մաշկ՝
Շինծու, վատ արևայրուքով,
Այն պետք է ունենար իր վերջն ինչ-որ տեղ:
Ոչ բնական եղջյուրներով բու՝
Փքուն,
Դեղին աչքերով:
Ծոված ոստի վրա սովորական այծկիթ-այրի՝
Լրիվ փոշեկոլով:
Հին ամսագրերի կույտեր:
Տղայի խնամված նամակների
Եվ սիրո անվերջ գիծ,
Նրանք պետք է ունենային իրենց վերջն ինչ-որ տեղ:
Երեկվա ճառաբեմը փշրվեց
Երիտասարդության և ծովափին մաս-մաս արված
Նավակի հետ մեկտեղ՝
Մեծ փոթորկի տարում,
Մինչ հյուրանոցն այրվեց
Միջիգան նահանգի Սենեյ քաղաքում:

ԽՈՐՀՈՒՐԴ՝ ՈՐԴՈՒՆ

Երբեք մի վստահիր սպիտակ մարդուն,
Երբեք մի սպանիր հրեային,
Երբեք պայմանագիր մի կնքիր,
Եկեղեցուց նստարան մի վարձիր:
Մի զինվորագրվիր դու քո կամքով,
Ոչ էլ բազմակի ամուսնացիր,
Երբեք մի գրիր ամսագրի համար
Ու ձեռք մի տուր քո մեղվապարսին:
Ամեն անգամ թուղթ դիր նստատեղի վրա,
Պատերազմներին դու մի հավատա,
Քեզ պահիր միշտ մաքուր ու կոկիկ,
Կնության մի առ շնացող մեկին:
Երբեք մի վճարիր ահաբեկչին,
Երբեք մի դիմիր դատարան,
Երբեք մի վստահիր հրատարակչին,
Այլապես կքնես ծղոտի վրա:
Բոլոր ընկերներդ քեզ կլքեն,
Բոլոր ընկերներդ կմահանան մի օր,
Ուրեմն՝ ապրիր առողջ կյանքով
Եվ միացիր նրանց երկնքում:

* * *

Խոնավ, անձրեւոտ, աշնանային օրը,
Երբ փախուստ չկա թախծից անափ,
Եվ միայնության շունչն է տիրում,
Մեկի ծնկներում դեմքդ թաղել,
Շնչահեղձ լինել ու արտասովել
Եվ զգալ մեկի ձեռքերը տաք...

ՎԱԼԵՆՏԻՆ

Եթե իմ Վալենտինը չդառնա,
Ես ինձ կկախեմ քո սոնաժառից:

ՄԵՐԻԻՆ

Կնոջ՝ Մերի Հեմինգուեյի նախաբանը. «Մոտ տասնութ ամիս, 1942-1943 թթ., Էռնեստն օգտագործել է իր Pilar ձկնորսանավը որպես խայծ գերմանական սուզանավերի համար... Pilar-ը լողում էր Կուբայի հյուսիսային ափերին մերձ կղզիների միջով՝ պատրաստ ռումբը զցելու առաջին իսկ «մարտական ձկան» վրա, որը կհայտնվի ջրի երեսին (Pilar-ը փայտե նավակ էր)»:

Իմ սիրելի Մերի Ուելս՝

Իմ միակը:

Նա էլ նույնպես ենթակա է վերադարձման:

Բայց այդ օրը օրինական չի լինելու մեր կարդինալ

Սպելմենի մոտ: Կասկածելի կլինի և քունը նույնպես:

Դե, հեռացեք: Շուտ հեռացեք՝ լուռ ու խաղաղ:

Թե կարելի է՝

Անչափ կամաց: Ձեզ հետ վերցրեք այդ կեղեքիչ

«թե կարելին»:

Կախեք նրան ինչ-որ խուլ տեղ: Հանեք ոգին

դուք նրանից:

Հնացել է ժարգոնը այս: Հստակության

կարիք ունենք:

Հա, բոլորն են տուժում հիմա, բայց մենք արդյունք

փոխողը չենք:

Դա որ գիտենք՝ քայլենք դանդաղ:
Մենք իրար ենք նայում Սիրով, Կարեկցանքով:
Դա հայտնի է դառնում միայն հարյուր օր անց:
Եվ սա վերջին
Նշանն է պարզ:

Ամեն ինչ կար՝ շփոթություն, զայրույթ, ժխտում,
վախկոտություն,
Մխավներ բյուր... անհմաստ է շարունակելն իսկ:
Դա եղել է և կլինի: Իհարկե, այն կկշռվի
ձիշտ-հավասար
Տոկունությանը, համառությանը, խիզախությանը
և ձարակությանը՝
Պայքարի մեջ...

Բայց հենց հիմա, այս վայրկյանին՝
Մեր, Կարեկցանք:
Համբերելու ունակություն:
Թող՝ միայն Մեր ու Կարեկցանք:
Հաստատիր այն՝
Մեր, Կարեկցանք:

ԲԱՌԻՆ ՍԻՐԱՀԱՐՎԱԾ

Միրահարված բառին,
և ինչ-որ ուզում եմ՝
հյուսել այնպիսի
արտահայտություն,
որ չկործանվի
ոչ ավիա-, ոչ էլ դահձի հարվածից:

Մենք՝ մարդիկս, մեռնում, նվաղում ենք:
Ես ու դահիձներս
պիտի վերապրենք
բանաստեղծությունն այս -
դաժան ու մահացու:
(Անշուշտ, պիտի բախտդ բերի բանաստեղծելու մեջ:
Երբեմն բերում է,- բայց ոչ՝ ամեն ինչ վատնում ես
մանրութների վրա):

Երկչոտ եմ ես: Ի վերջո, շարունակ ջրի վրա էի:
Ես գիտեմ՝ ոնց սպանել: Ես հավատում եմ դրան:
Ստույգ՝ չեմ հավատում, բայց անում եմ դա:
Ամեն ինչ հանգում է փորձառությանը:
Փորձ ու փորձառություն:
Իմ սիրտը կերել է ստորջրյա կրիան, մեջքին՝
պինդ պատյան:
Ավելին՝ կաթսայիկը ձաք է տալիս:

Գլուխս է ձաքում:
Միգրենը տան հյուրի պես է՝
ինձ զգոն չի թողնում:
Իհարկե,
գոհ եմ ընկերության համար,
բայց ես ուզում եմ միայնակ մնալ:

Ես միգրենի հետ եմ:
Նա իմ եզակի ընկերն է:
Մարդ՝ առանց երեխաների և առանց կատվի:
Ոչ մի ծանոթ

ծառ պատուհանից դուրս:
Ծովի մեջ երկար ցատկի փոխարեն՝
հինգ դյույմ լոգարան:
Զենքը հանձնված է:

Կատուներ չկան:
Պարսպ շնաբույն:
Գանգո ձոձվում է ծովի աղմուկից:
Փակում ես աչքերդ՝
առագաստանավեր,
առագաստանավեր...
Եվ էսկադրիլիան «կարմիր խավիարի»:

Այլոք կշարունակեն մարտը:
Եկեք մեզ պահենք ուղևորի նման: Սեղմենք «ջիփակը»
տարբեր ստերի և
փչոցների միջով:
Ոչ, սա այն ավարտը չէ, որ մենք սպասում էինք:
Ոչ այդպիսին:

Ոչ այդպիսին, երբ սուզանավը ջրի երես ելավ,
ոչ այդպիսի
կոճակ մենք սեղմեցինք: Բերանս չորացել էր:

Որտե՞ղ ես. Պատչի:
Որտե՞ղ ես, Վուլֆի:
Իսկ մենք ծխելու բան էինք տվել...
Այնպիսի կրակ էինք նրանց տվել...
Դա մենք կարո՞ղ էինք:
Դա մեր մե՞ն ու միակ պարծանքն էր՝
կրակ մատուցել:

Կարոտում եմ Վուլֆին: Նա հենց այն տղան էր,
ինչ-որ պետք էր:
Նա կամրջակի վրա էր: Երբեք չի վնասել
օդապարիկը:
Նա ասաց. «Ծերուկ, ամեն ինչ ամուր կտորից է:
Մի՛ գայրացիր, ծերուկ: Ամեն ինչ կարգին է»:
Կարոտում եմ ծովը: Ընկերներս են ձգում:
Ես թքած ունեմ միգրենի վրա: Մի՛ գայրացիր,
Վուլֆի: Ես գվարձանում եմ:
Խոստանում եմ՝ միշտ լինել ոտքի վրա:

Կարոտ:
Ջսափրված եմ, փշոտ:
Մրցակցում եմ էլեկտրաժամացույցի հետ:
Ես պահակ եմ,
անլսելի հպում:
Հենց այնպես չեմ բանալին թողել դռան մեջ:

Շուտով տասներկուսն է:
Գողերի ժամանակը:
Բայց դու կվազես՝
անցնելով պատուհանը:
Անսպասելի հանգիստ
դու հարցնում ես.
«Կարելի՞ է: Ես եմ»:

Լուսավոր իմ, ետ բեր՝ ինչ-որ էլ չկա:-
Ձկան հոտ է գալիս,
կոյուղու,
բանջարեղենի...
Ուրեմն, թիավարելով՝
վերադարձնում է ջուրը,
որ նորից բաց թողնի
ուրախությամբ:

Մի թոնթորիք, Վուլֆի:
Ամեն ինչ կարգին է:
Մեզ մի լավ ծալել են:
Բայց մենք էլ վնասով չենք դուրս պրծել:
Իսկ մենք նվնվում ենք, եթե մեկ ուրիշն է
կրակ տալիս:
Մեր փոխարեն...

Մայիս, 1944

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ

Էռնեստ Հեմինգուեյ

Ծնվել է 1899 թվականի հուլիսի 21-ին, ԱՄՆ Չիկագո քաղաքի մերձակայքում գտնվող Օք-պարկ քաղաքում: Դպրոցն ավարտելուց հետո աշխատել է որպես լրագրող: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին մեկնելով Եվրոպա՝ դարձել է կամավոր զինվոր և ծանր վիրավորվել: Ապաքինվելուց հետո զբաղվել է գրական գործունեությամբ և Փարիզում լույս ընծայել «Մեր ժամանակներում» կոչվող պատմվածքների առաջին ժողովածուն: Գրքում մանկության ու պատանեկության տարիների հուշերի կողքին տեղ են գտել պատերազմի թեմաներով զբաղված պատմվածքներ:

Պատերազմի թեման իր արտացոլումն է գտել նաև Հեմինգուեյի հետագա ստեղծագործություններում: Այդ գործերից ամենանշանակալիցը «Հրաժեշտ զենքին» վեպն է, որը լայն տարածում գտավ աշխարհում մեծ հռչակ բերելով գրողին: Ուշագրավ են նաև նրա «Կիլիմանջարոյի ձյուները», «Մադրիդի վարորդները», «Կղզի օվկիանոսում» ստեղծագործությունները: Իր ստեղծած գրական ոճով և արծարծած խնդիրներով նա նոր երևույթ էր գրականության ասպարեզում: Գրում էր սեղմ, ազդեցիկ ու պատկերավոր, պարզ, բայց և խորը:

Եվրոպայում ապրելու տարիներին նա մասնակցում է նաև Երկրորդ համաշխարհային պատերազմին: Կյանքի և

պատերազմների բովով անցած, ստեղծագործելու անսպառ եռանդով լցված գրողը Եվրոպայից վերադարձել է Կուբա՝ իր նախնիների հայրենիքը: Այստեղ է նա գրել իր հանրահայտ վիպակը՝ «Ծերունին և ծովը»: Այս և մյուս ստեղծագործությունների համար 1954 թվականին նրան շնորհվում է Լոբեյան մրցանակ:

Հեմինգուեյի բեղմնավոր կյանքը, սակայն, ցավալի ավարտ ունեցավ. վերջնականապես քայքայվել էր նրա առողջությունը: 1961 թվականի հուլիսի 2-ի առավոտյան, քանի դեռ կինը՝ Մերին, քնած էր, նա դուրս է գալիս տան նախասրահ, վերցնում որսորդական հրացանը և ինքնասպան լինում: Վերջին տարիներին Հեմենգուեյը խոր ընկճախտի մեջ էր և տառապում էր պարանոյայով. կարծում էին, որ դա էր նրա ինքնասպանության իրական պատճառը: Հեմենգուեյի ընկերները պնդում էին, որ նա համակված էր հետապնդման մոլուցքով: Գրողը բազմիցս է խոսել այդ մասին, նշելով, որ իրեն հետապնդում են ՀԴՖ աշխատակիցները, լսում իր հեռախոսազանգերը, վերահսկում փոստը, տանը և մեքենայում տեղադրել են գաղտնալսող սարքեր... Մտերիմները նրան չէին հավատում: Մի քանի տասնամյակ անց պաշտոնական հարցում կատարվեց ՀԴՖ՝ Հեմինգուեյի գործի հետ կապված: Պատասխան նամակում ՀԴՖ-ից գրել էին, որ 1940-ականներին, իրոք, Հեմենգուեյի նկատմամբ հսկողություն է եղել սահմանված, քանի որ նրանց կասկածելի է թվացել գրողի գործունեությունը Կուբայում: Նրանք գրում էին, որ գաղտնալսել են նրա բոլոր հեռախոսային խոսակցությունները, ստուգել են փոստը, հետապնդել...

Հիմնական ստեղծագործությունները.

- Գարնան տարափ (The Torrents of Spring) - 1926
- Եվ ծագում է արևը (Ֆիեստա) (The Sun Also Rises)
- 1926
- Հրաժեշտ զենքին (A Farewell to Arms) – 1929
- Կիլիմանջարոյի ձյուները (The Snows of
Kilimanjaro) - 1936
- Ունենալ և չունենալ (To Have and Have Not) - 1937
- Ում համար է հնչում զանգը (For Whom the Bell
Tolls) – 1940
- Գետից այն կողմ, ծառերի ստվերում (Across the
River and Into the Trees) -1950
- Ծերունին և ծովը (The Old Man and the Sea) – 1952
- Տոն, որ միշտ քեզ հետ է (A Moveable Feast) - 1964
- Կղզի օվկիանոսում (Islands in the Stream) - 1970
- Եդենի այգիները (The Garden of Eden) – 1986
- Ճշմարտության փայլը (A glimmer of truth) – 1999

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«ՀՐԱԺԵՇՏ ԶԵՆՔԻՆ» շարքից	5
Ուտքերի դոփյուն	6
Մենք սեր ենք տանում մեր մեջ	7
Մեր և կարեկցանք	9
Դեպի քեզ եմ նետվում	10
Հավերժ կենդանի	11
Ինչո՞ւ	13
Սպանվածը	14
Ինչո՞վ է գիշերը տարբերվում ցերեկից	15
Թաց հողի վրա	16
Champs d'honneur	17
Արսիերո, Ազիագո	18
«Բոլոր բանակները միանման են»	19
Կաթվածահար զորքը	20
Reparto d'assalto	21
«Օրվա խինդն անցավ»	23
Սպանված Պայիվը – Հուլիսի 8, 1918	25
Դարը պահանջում էր	26
Գերիները	27
Մահացած լավ տղաներին	28
ԱՅԼ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ	29
Մենք վատնում ենք այն, ինչը ստեղծված չէ վատնելու համար	30
Տարիքի պահանջով	31

Վերնագիր	32
Ի վերջո	33
Խենթ Քրիստոնյային	34
Պոեզիա	35
Իսպանիայի ոգին	36
Ինձ դուր են գալիս ամերիկացիները	39
Ինձ դուր են գալիս կանադացիները	41
Ռուզվելտ	43
Դ'Անունցիո	44
Նեոթոմիզմական պոեմ	45
Ես խենթանում եմ վայրի կանանցից	46
Մոնպառնաս	47
Բանաստեղծություն	48
Գնդացիք	49
«Միտքը՝ բորբոքուն, սառցափոշին է կպած դեմքին»	50
Երիտասարդության հետ	51
Խորհուրդ՝ որդուն	52
«Խոնավ, անձրեւոտ, աշնանային օրը»	53
Վալենտին	54
Մերիին	55
Բառին սիրահարված	57
ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ	61

ԷՆՆԵՍՏ ՀԵՄԻՆԳՐԻԵՅ

ԴԱՐԸ ՊԱՀԱՆՋՈՒՄ ԵՐ
բանաստեղծություններ

Թարգմանություններն անգլերենից՝
Քրիստինե ՔՈՉԱՐՅԱՆԻ

Խմբագիր՝ Հ.Ալեքսանյան
Էջադրումը՝ Թ.Հարությունյանի
Կազմի ձեւավորումը՝ Ա.Գրիգորյանի



Տպագրվել է «Նովել» հրատարակչատանը
Հասցե՝ Երևան, Մայիսի 9 փ., տուն 23
Հեռ.՝ 096 643 653

«Գեղարմ» հանդեսի մատենաշարով լույս են տեսել.

- Թատերախաղեր արեւմտյան գրականությունից - 2010
Իոսիֆ Բրոդսկի. «Տեղատարափի շաչյունը»
(բանաստեղծություններ) - 2011
- Միխայիլ Բախտին. «Դոստոևսկու պոետիկայի
խնդիրները» - 2012
- «Միրիուսի սրնգահարները» (Վ. Խլերնիկով, Ն. Գումիլյով,
Վ. Խոդասեիչ), (բանաստեղծություններ) - 2012
- Սերգեյ Դովլաթով. «Միայնակների երթը»
(պատմվածքներ) - 2012
- Յուրի Լոտման. «Միֆ. Անուն. Մշակույթ» - 2012
- Վառլամ Շալամով. «Կոլիմյան պատմվածքներ» - 2012
- Ժարկո Միլենիչ. «Լեռնը՝ հրաշագործի աշակերտը»
(հեքիաթ-վիպակ) - 2013
- Պավել Ֆլորենսկի. «Իկոնոստաս» - 2014
- Ռուս կոնցեպտուալ պոեզիա (Գ. Պրիգով, Վ. Նեկրասով,
Լ. Ռուբինշտեյն) - 2014
- Հենրիխ Սապգիր. «Զուգահեռ մարդը»
(բանաստեղծություններ) - 2014
- Վասիլի Գրոսման. «Կյանք եւ ճակատագիր»
(վեպ 2 գրքով) - 2014
- «Կամուրջների խռովությունը. մետաֆորիստներ»
(բանաստեղծությունների անթոլոգիա) - 2015
- Ալեքսանդր Սոլժենիցին. «Մատրյոնայի կավածքը»
(պատմվածքներ) - 2015
- Անդրեյ Պլատոնով. «Չեւեմգուր. Գուրը.
Պատմվածքներ» - 2015

- Արդի ռուսական վերլիբր (բանաստեղծությունների
անթոլոգիա) - 2015
- Չինաստանի մշակույթի քրեստոմատիա - 2015
- Ջիդի Մաջիա. «Հրեղեն խոսքեր»
(բանաստեղծություններ) - 2015
- Մա Բայ. «Սրտի արձագանքներ»
(բանաստեղծություններ) - 2015
- Եվգենի Վոդյազկին. «Լավր» (վեպ) - 2015
- Քայ Տյանսին. «Խաղաղ կյանքի երգը»
(բանաստեղծություններ) - 2015
- Ռուս այլախոհական պոեզիա (բանաստեղծությունների
անթոլոգիա)- 2015
- Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատորներ 1-9) - 2016-2021
- Յու Ջիան. «Անձրեից պատսպարվող թռչունը»
(բանաստեղծություններ) - 2016
- Պավել Բասինսկի. «Լեւ Տոլստոյ. Փախուստ դրախտից»
(վավերագրական վեպ) - 2016
- Չժան Յզի-յան. «Երազ ծովի մասին»
(բանաստեղծություններ) - 2016
- Վան Ջենչկի. «Երիտասարդ վանականի
սիրո պատմությունը» - 2016
- Լյուդմիլա Պետրուշենկայա. «Սեր. Երջանկություն.
Ռեքվիեմ» (պատմվածքներ)- 2016
- Անդրեյ Բելի. «Պետերբուրգ» (վեպ) - 2016
- «Դիկոռոսներ. Անհայտ պոետների ապաստան»
(բանաստեղծությունների անթոլոգիա) - 2016
- Ռուս մինիմալիստներ (բանաստեղծությունների
անթոլոգիա) - 2016
- Իձյե Թան. «Կոնֆուցիականությունը,
բուդդայականությունը, դաոսիզմը, քրիստոնեությունը
եւ չինական մշակույթը» - 2016

- Սյուն Շի-ի. «Երկնային կամուրջը» (վեպ) - 2016
- Դոնգ Քիանգ. «Ամուսնություն» (ազգագրություն) - 2017
- Դոնգ Քիանգ. «Կացարաններ» (ազգագրություն) - 2017
- Ինգեբորգ Բախման. «30-րդ տարին» (պատմվածքներ
 և բանաստեղծություններ) - 2017
- Ջիդի Մաջիա. «Ընծառյուծից մինչև Մայակովսկի»
 (բանաստեղծություններ)- 2017
- Անդրեյ Վոլոս. «Վերադարձ Փանջիռուղ» (վեպ) - 2017
- Դոնգ Քիանգ. «Թաղում» (ազգագրություն) - 2017
- Դոնգ Քիանգ. «Փառատոներ» (ազգագրություն) - 2017
- Դոնգ Քիանգ. «Ուտեստներ» (ազգագրություն) - 2017
- Սյաո Ցյան. «Վիշապի մորուքներն ընդդեմ նախագծերի»
 (գրականագիտություն)- 2017
- Ուան Ցուոլիան. «Մերձակցության աստիճաններ»
 (գրականագիտություն) - 2017
- Ֆյոդոր Սոլոգուբ. «Չնչադեւը» (վեպ) - 2018
- Ու Չուն. «Չինական մշակույթ. Փիլիսոփայություն» - 2018
- Մարտիրոս Ոբն. «Մոմերն իգուր են այրվել
 մեղքերիս համար» (վիպակ) -2018
- Ս. Ուեյսին, Ճ. Սյուն. «Չինաստանի յուրահատկությունները:
 Չինաստանի համաշխարհային ժառանգությունը» - 2018
- «Աղի ձայնը» (20-րդ դարի հետախույզական թվականների
 սերնդի չին գրողների պատմվածքներ) - 2019
- 20-րդ դարի ռուսական պատմվածք (անթոլոգիա) - 2019
- Գվինեթ Լյուիս. «Քառսի հրեշտակները»
 (բանաստեղծություններ) - 2020
- Պավել Բասինսկի. «Լեւ Տոլստոյ. Ազատ մարդը»
 (վավերագրական վեպ) - 2020
- Յերինգ Նորբու. «Փրկված գառը»
 (տիբեթյան պատմվածքներ) - 2020
- Չժան Յավեն. «Դարերի կանչը.
 Ստորումներ Հոնկոնգի մասին» - 2020
- Կոնֆուցիոս. «Չրույցներ» - 2020

- Մարիա Գրեչ Գանադո. «Երիզվածք»
(քանաստեղծություններ) - 2021
- Էլիզաբեթ Քրիստին Յոկուսդոտիր. «Մեր, նյարդերի
քայքայում. Ոչ մի պար Չուկ-քարի վրա»
(քանաստեղծություններ) - 2021
- Ալեքսեյ Վառլանով. «Մտագայլը» (վեպ) - 2021
- Միխայ Այվագ. «Այլ քաղաք» (վեպ) - 2021
- Իմանուել Միֆսուդ. «Յուտա Հայմ» (վեպ) - 2021
- Խոսեբա Սարիոնանդիա. «Բանտեր եւ արտոններ»
(քանաստեղծություններ) - 2022
- Չինական ավանդական բժշկության հիմնական
հասկացությունների հանրագիտարան (հատորներ 1-2) - 2022
- Նիկոլա Դուրետիչ. «Մահվան եւ անհետացման
ժամանակագրությունը» (պատմվածքներ) - 2022
- Սլավենկա Դրակուլիչ. «Ֆրիդա կամ՝ ցավի մասին»
(վեպ) - 2022
- Միգիզմունդ Կրժիժանովսկի. «Հիշողություններ
ապագայի մասին» (երեք վիպակ) - 2022
- Եվգենի Վոդյազկին. «Կղզու արդարացումը» (վեպ) - 2022
- Թրևոր Չահրա. «Երեկոյան ժամերգություն»
(պատմվածքներ) - 2023
- Լեոնիդ Յուզեֆովիչ. Հելլենասերը
(ոչ պատմական վեպ) - 2023
- Պիեռ Սեյլակ. «Բարի գիշեր մաղթելով»
(պատմվածքներ) - 2023



Ոգի-Նաիրի
Vogi-Nairi

www.vogi-nairi.am

Էլ. հասցե՝ vogi.nairi@mail.ru

հեռ.՝ +374 97252323, +374 94259161